ԻՐԱՎԱՍՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ ԶՈՐԱՀԱՎԱՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՐՑՄԱՆԸ

08.10.2020 16:50

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը 2020թ. հոկտեմբերի 1-ին պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով ՀՀ պաշտպանության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարներին ներկայացրել է **դիմում,** որով բարձրացվել է այն հարցը թե ***արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին ՀՀ կառավարության 27.09.2020թ. թիվ 1586-Ն որոշման հավելվածի 1-ին կետով հայտարարված ընդհանուր զորահավաքի շրջանակներում հավաքագրված և ռազմական գործողություններին մասնակցելու համար Հայաստանի կամ Արցախի Հանրապետության սահմաններ ուղարկված աշխատող տղամարդկանց աշխատավարձը ռազմական գործողությունների ամբողջ ժամանակահատվածի համար վճարելու է Հայաստանի Հանրապետությունը, թե՞ ոչ:***

Դիմումով ՀՀ փաստաբանների պալատը ներկայացրել էր իր մեկնաբանություններն առաջադրվող հարցի վերաբերյալ:

ՀՀ փաստաբանների պալատի հարցմանն իր պատասխան **ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է**, որ նախատեսվում է ՀՀ ազգային ժողովին ներկայացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքում (124-րդ հոդվածում) փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ, որի համաձայն զորահավաքային զորակոչի կանչված քաղաքացու աշխատատեղը պահպանվում է նրա զորահավաքային զինվորական ծառայության ամբողջ ժամանակահատվածում, իսկ վարձատրությունն իրականացվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված կարգով:

ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ հայտնել է, որ **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զորահավաքային զորակոչի միջոցով ծառայություն անցնող զինծառայողների վրա տարածվում և նրանց հաշվարկվում է պայմանագրային զինծառայողների համար սահմանված դրամական ապահովությունը:**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նույնպես տեղեկացրել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի համապատասխան փոփոխությունների նախագծի մասին և հայտնել, որ մինչ փոփոխությունները գործում է **«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված նորմի**՝ ՀՀ փաստաբանների պալատի դիմումով ներկայացրած **անալոգիան, այն է՝** ***ժանուցագրեր ստացած և ռազմական գործողություններին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության և Արցախի սահման մեկնած աշխատող տղամարդիկ՝ պահեստազորայիններն օգտվում են պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար սահմանված արձակուրդից, իսկ այս արձակուրդի ընթացքում ստանում են իրենց աշխատավարձի չափով վարձատրություն Հայաստանի Հանրապետությունից:***

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի 01.10.2020թ. դիմումը.

Բեռնել ՀՀ պաշտպանության նախարարության գրությունը.

Բեռնել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գրությունը.

Առաջարկվող նորություններ

19.03.2019ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՅՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԵԼ Է ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲԱԺԻՆ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

08.10.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ԴԵՍՊԱՆԱՏՆԵՐԻՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻՆ, ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՈՉՈՎ

09.10.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԻԱՑԵԼ ԵՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })